ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 35 – Ա 30 հունվարի 2019 թ.

«ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության /նշանակման/ մրցույթի կարգ»-ի 7-րդ կետը՝

որոշում եմ՝

1. Հաստատել 2019 թվականի հունվարի 31-ին, ժամը 11^{00}-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ Հարությունյան Վանիկ (մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ), Զոհրաբյան Արմեն (մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ), Մուշեղյան Յուրա (ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ), Համբարձումյան Համբարձում (մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ), Մնացականյան Վարդուհի (մարզպետարանի զարգացման ծրագրերի զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ), Ղուրշուդյան Մարատ (մարզպետարանի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ), Խաչատրյան Արամ (մարզպետարանի իրավաբանական բաժնի վարիչ):

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Հարությունյան Վանիկին, քարտուղար՝ Մնացականյան Վարդուհուն:

3. Հանձնաժողովի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտից հետո:

Недействительная подпись

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
Ք.Գավառ